ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 4-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 31.07.2018Թ. ԹԻՎ 7-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ոստիկանության պետի 2018 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի խորհրդականների և օգնականների միջև պարտականությունները բաշխելու վերաբերյալ ցանկը հաստատելու մասին» թիվ 7-Լ հրամանով հաստատված հավելվածի.

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական՝ Գ. Աբովյան

«Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ» հասարակական կազմակերպության անդամների և ոստիկանության համակարգի միջև ակտիվ փոխհամագործակցության աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն:»,

2) 5-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«5. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական՝ Ա. Կիրակոսյան

Հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման ոլորտի համակարգում, քաղաքականության մշակում, ինչպես նաև խնդրահարույց հարցերի լուծմանն ուղղված խորհրդատվությունների տրամադրում:»:

2. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՕՍԻՊՅԱՆ**

«28» 03 2019թ.

ք. Երևան